ըխարքի փրկանաւորեաց զնա, եւ նորա տուեալ կաշառս պահապան զօրաց՝ փախուցեալ անկաւ յԵրուսաղէմ։ Ո՞վ կարէ պատմել աստ նամակագիրն զգործս նորա՝ զի ոչ եթող տեղիս զոր ոչ աւերեաց՝ և ոչ զոք՝ զոր ոչ մատնեաց 'ի տուգանս, մինչեւ զկանայս և զմայրն իւր իսկ գլխովին (1805)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ընդդիմութիւն Լատինաց։ Յանիկան սակս Ապու Մէրագի. և փախուստ նորա։ Ապտուլլահ փաշա։ Խաղաղութիւն և վէճ Յունաց։ Նեղութիւն Հայոց վասն Հրովարտակաց։ Դիտաւորութիւն փախչելոյ Թէոդորոսի. նեղեալ յոյժ 'ի տառապանաց։

ԼԱՏԻՆՔ կամեցան խափանել զԹախօրն Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան՝ յաւուր մեծի Հինգշաբթի, յարուցեալ 'ի վերայ նոցա բրօք և մահակօք, այլ յետոյ նոքին իսկ Լատինք առաքեցին աղաչաւորս առ Թէոդորոս Պատրիարք չգրել ինչ զայնմանէ 'ի Կոստանդինուպօլիս, զի մի անկցի ցրտութիւն 'ի մէջ մեծամեծաց երկուց կողմանց. զի մեք ծանեաք ասեն զյանցանս մեր, թէպէտեւ Լատինք գրեալ էին, և գլխաւորք ազգին պատուիրէին Թէոդորոսի սիրով վարիլ ընդ Լատինս և ընդ Յոյնս։ Իսկ Թէոդորոս Պատրիարք նեղեալ յոյժ յայսպիսի տագնապալից ժամանակի՝ խոյս ետ 'ի Բեթղեհէմ, յետ կատարելոյ զտօն Պայծառակերպութեանն Քրիստոսի, գտանել անդ սուղ ինչ անդորրութիւն, այլ 'ի ստիպել հարկին անդրէն դարձաւ 'ի տեղի իւր։

Ի բազմանալ գանկատանաց և բողոքագրոց 'ի Դուռն վասն չարութեան Ապու Մէրագ Մէհէմմէտ Փաշայի՝ գրեցաւ հրովարտակ քննել զգործս նորին և բառնալ զնա 'ի կենաց. յայս պաշտօն կարգեցաւ 'ի Դրանէ Խասէքի Մուստաֆա աղա։ Ի հասանիլ սորա յԵրուսաղէմ կոչեաց առանձին զԹարգմանն Հայոց, եւ սկսաւ խօսիլ ընդ նմա սիրով եւ քաղցրութեամբ՝ ըստ պատուիրելոյ Թնկրեան